

ԿԱԹՈՂԻԿԷ
ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ. ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀՌՈՎՄ

ԱԶԴ

1. Կաթողիկէ Արձագանգը առ այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վեցամսեայի բաժանորդագինն է մէկ մէճիտ անոնց համար որ ի Կ. Պոլիս՝ Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառս՝ Եպիսկոպոսարաններու կամ Առաջնորդարաններու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դրկելու համար՝ Չորս (4) ֆրանք է: Հասցէն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտոյ Կ. Պոլիս փոխադրուի, ծանուցին ու ձեւը, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանք վերջնականապէս պիտի ճշդուին: — Մէկ թիւը՝ մէկ դահեկան է:

2. Արձագանգը կը հրատարակուի Շաբաթ օրերը:

3. Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպայման կամ նոյնութեամբ հրատարակելու իրեն դրկուած ո՛ եւ է յօդուած:

4. Ստորագրեալ յօդուածոց պատասխանատուութիւնը ամբողջովին կը մնայ գրողներուն վրայ:

5. Նամակ եւ յօդուածներ կը դրկուին ուղղակի խմբագրութեան:

6. Ձեռագիրներ ետ չեն դարձուիր:

7. Ծանուցմանց համար մասնաւոր պայմանադրութիւն կը կատարուի:

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԹԱՓԹԱՓԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Առաջին Տարի | 14 Հոկտեմբեր 1911 | Թիւ 17.

ՏՕՆԱԿԱՍԿՕՒԹԻՒՆ ՄԸ

Հոկտեմբեր ամսոյն առաջին օրը նշանաւոր եղաւ Հայ Կաթողիկէից համար ի Հռոմ. շատ գեղեցիկ հանդէս մը, — կամ լաւ ևս հանդէսներ — կատարուեցան Քահանայապետական Լեռնեան Հայ Դպրոցին ամարանոցն, որ Սաբինեան գեղաղէշ բլուրներու վրայ կանգնած է՝ վեհ ու մեծվայելուչ, և կը կրէ Castel S. Gregorio (Դղեակ Ս. Գրիգոր Լուսաւորչի) հոյակապ անունը։

Միջնադարեան դղեկի մը յուշարար այդ չքնաղ շէնքը կը բարձրանայ փառաւոր բարձրաւանդակի մը վրայ, ու կը տիրէ ընդարձակածաւալ հորիզոններու ; ինչպէս ահագին արծիւ մը արփիազնին՝ թառած բարձրաբերձ ժայռի մը գագաթ։ Իւր դիրքէն պարզուած տեսարանը հիասքանչ

է։ Ետևէն, ընդ արևելս, հսկայական ճիւղերով՝ գալարումներով իրարու վրայ կ'ամբառնան անտառախիտ բարձունք, յամպս ծրարելով իրենց ծայրերը՝ ստուարթելից փունջերով փառապսակ։ Անոնց միջև կ'ոլորին կը սողոսկին ջրարբի ծործորներ, վտակներ, օձապտոյտ լերանցամէջք, պարզելով մեծղի և ամեհի տեսարաններ։ Իսկ առջևէն, անհուն միջոցը ծովածաւալ կը տարածուի ընդ հիւսիս, ընդ հարաւ և ընդ արևմուտս, կտրուած Ապենինեան լերանց հեռաւոր շղթաներու ելևէջներով, որ կը լողան ծիրանեխառն թեթև կապոյտի մէջ, ուր կը սաւառնին Աւսոնեան Մուսայք՝ իրենց անմահութեան աւիւնով երկնաշունչ։ Իսկ անծայրածիր դաշտերն՝ կարծես մանկական գեղածիծաղ ոստոստումներով կը կազմեն վէտ ի վէտ հոգեզմայլ բլուրներ, ստուարթախիտ սարեր ու ձորեր, ակնապարար հովիտներ, հոգեխաղաղ ձիթաստաններով, մրգաշատ դեղձան արտերով, ոսկեգոյն ողկուզաշատ այգիներով, զեփիւռներէն ծփալով, օրօրուելով, կայտառելով ի խնդս ի խնդս արբեցած։ Հարիւրաւոր աստ անդ ցանուած են աւաններ գիւղեր, ալիտակափայլ, երկնուղէշ զանգակատուններով, և ամարանոցներ՝ իշխաններու, կոմսերու, այլ և այլ ազգաց դպրոցներու, անթիւ անհամար, որոնք արևու կամ լուսնոյ ճառագայթից տակ կը ցոլան կը շողան անհամեմատ անդամանդներու պէս՝ անջրպետի մէջ ցիրուցան։ Դէպ ի հարաւ՝ մշուշի մէջ կ'երևի Թագուհին տիեզերաց, Հռոմ Քաղաք, և հորիզոնին վրայ վեհաշուք կը նկարուի Ս. Պետրոսի Եկեղեցւոյն բարձրապերճ Գմբէթը։ Իսկ հոն՝ դիմացը, վեհապանծ հսկայից յաւիտենական տիպար, կեցած է վիթխարին Սորակտոն՝ հոյակապ լեռը, Հռովմէական արծիւներու Թռիչքին նախանձաբեկ. որուն սիրահարած էր Սապինայի մեծ Երգիչն Որատ, դիւրակեցիկ գինեպաշտը. որ հարիւրաւոր տարիներով դիտեց՝ արբշիռ, անթիւ սպառազէն լեգէոններու գետնադղորդ քանդիչ գրոհն ընդ ծագս աշխարհի. որոյ բարձանց վրայ՝ անտառներու մէջ, դեռ կը ցցուի դարաւոր Մենաստանը, ուր՝ — ինչպէս կ'ուզէ Նուիրական Աւանդութիւնը և վաղեմի գիծերով ընդնշմարուող որմանկարը, — ողջագուրուեցան երկու մեծ Հայրապետներն ու Ինքնակալները, Սեղբեստրոս և Գրիգոր, Կոստանդիանոս և Տրդատ։ — Բիւրաւոր ոլորտապտոյտ մանուածներով ամբառ դաշտերու մէջ սողոսկելէ վերջ՝ այս հսկայ լերան ոտքերուն ներքևէն անշշուկ կը սահի կ'անցնի ոսկեալեակն Տիբերիս, երթալու համար յայց Յաւիտենական Քաղաքին, ուր դարերու շրջանին մէջ տեսաւ մարդկեղէն կրից ու փառաց, մեծազօր Զօրավարաց և անմահ Գիտնոց ու Պոէտաց, Թագակալ Կայսերաց և գետնաքարշ ցոփակեաց շողմոգներու

ամպարիշտ ստուածացումը. ու երեք դարեր շարունակ կարմիր Ներկեցաւ Նա՝ ի սուր ի հուր և անհղագոչ գազաններու ճիրաններէն անխնայ կոտորուող բզքտուող անմեղ քրիստոնէից արիւնով. ապա ողջունեց Եկեղեցւոյ ազատութեան ակնախտիղ արեւածագը. այնուհետև Քրիստոսի փոխանորդաց յաւիտենապէս անսասան Գահոյից ոտքերուն համբոյր տալով սահեցաւ անցաւ ի ծոց խաղաղութեան ովկիանուն, տասնևօթն դարերէ ի վեր, և ցվերջ ժամանակաց պիտի խայտան իւր ալիք՝ ձայն տալով իրարու ճեպել ի սէգ երկնասլաց Գմբէթին՝ Առաքելապետի սրբազան Տէրմին։ ... Բայց յաճախ Տիբերիս, իբրև դարերու չարչարանաց և մարդկային վշտերու և ցաւերու արտասուչ հառաչ, կ'արձակէ անկապար մառախուղ, ծածկելով ամէն ինչ. և այն ատեն, Ս. Գրիգորի դղեկին ատից առջև կը տարածուի կարծես անսահման ծով մը, որոյ մէջէն գլուխ կը ցցուեն՝ իբրև ուրուականներ, բլուրներու գագաթներն, կղզիաձև։ ... Արեգակնամուտը նոյնքան փառք և հոգեզմայլ է, երբ արևը՝ արիւնագանգ գունդ մը, կը հակի Ապենինեանց ետին, դէպ ի ծով և Ովկիան, հուսկ ողջունով մը ոսկեզօծ գեղերփնելով թեթև բրդեղէն կամ սևաթոյր ահագնատեսիլ ամպերու կուտակումներն, և Հռովմէական ու Սաբինեան անվերջ ալետատան դաշտեր, որոնց վրայէն յանկարծ ստեղծագործ Սիրոյ յուսապարար թեթև ժպիտ մը կը սաւառնի սաստուալով։

Այսպիսի տեսարան մըն է ահա զոր անվրդով կը դիտէ յաւէտ՝ Դղեակըն Ս. Գրիգորի Լուսաւորչի, իւր վեհաշուք գլուխին վրայէն։

Հոկտեմբեր 1 ի տօնախմբութիւնը այլ ևայլ հանգամանք կը բովանդակէր, որ վասն և սովորականէն շատ աւելի շքեղօրէն կատարուեցաւ։ Այն օրը Լատին Եկեղեցին կը տօնէր գլխաւորակ մեր բազմաչարչար Հայրապետին՝ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի. ուստի և Հայ Դպրոցն՝ ազնուապէս յարգադիր այս հաւատացելոց երախտապարտ ոգւով զուգաձայնելու, և գեղազնացութեան օրերը այսչափ քաղցր յիշատակի մը փառաբանութեամբ կնքելու նպատակաւ, այն օրը սահմանած էր արտաքոյ կարգի հանդիսութեանց։ Կը զուգադիպէր նաև երջանկաբար՝ Ս. Վարդարանի Աստուածածնին տօնը, որ Բոմբէյի հրաշագործ Տիրուհւոյն եւ յիշատակին նուիրուած է, ուր Նա՝ հեթանոսական մծղնեայ քաղաքին յաւէտ նշանաւոր աւերակաց քով, հրաշալեօք վեր կանգնեցուց հոյակապ տաճար մը, յաճախութեամբ աշխարհի հաւատացելոց և նշանօք և արուեստիւք՝ Նոր Սելովամ մը։ — Իսկ մեզի համար Վարագայ Ս. Խաչի տօնն էր։ Այս խորհրդաւոր բարերջնիկ աւուր մէջ Քահանայ պիտի օծուէր արժանա-

ւոր Սարկաւագն՝ Տ. Յովսէփ Քիրէճեան, Մարաշցի։ Հասմէն գալով՝ այս տօնախմբութիւնը պատուել բարեհաճած էր Նորին Գերերջանկութիւն, Ամենապ. Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեան, կաթողիկոս — Պատրիարք Տանն Կիլիկիոյ։ Նոյնպէս եկած էին ուրիշ բազմաթիւ հրաւիրեալք։

Դպրոցին Մատուռը ամբողջ օրը բաց մնաց հաւատացելոց։ Ժամը վեցէն սկսեալ՝ Պատարագները շարունակուեցան մինչև կէսօր. մօտակայ գիւղերու և արտօրէից բնակիչներն խուռներամ կու գային ու ջերմե-ռանդութեամբ կը դիմէին մեր հայրենաւանդ Արարողութեան վեհութիւ-նը՝ ոչ սակաւ հոգեւորական մխիթարութեամբ։ Մեր գեղեցիկ ծէսը, երբ լուրջ կարգաւորութեամբ կատարուի, հիացում խլած է միշտ Եւրոպացի-ներէ։

Ժամը առաւօտեան իննուկէսին սկսաւ Ձեռնադրութեան Պատարագը։ Հանդիսադիրն էր ձեռնադրիչ Արքեպ. Արհի. Գօյունեան Գեր.ը։ Առաջի-կայ էր Ամենապ. Հոգևոր Տէր, քահանայից խումբէ մը շրջապատեալ։ Շքեղ և յուզիչ եղաւ արարողութիւնը։ Երգեցողութիւնը՝ խորհրդաւոր և հոգեցունց, տխրազգեցիկ ու մխիթարիչ միանգամայն, կատարուեցաւ խմբերգակ սանուց կողմանէ. ամենայն ճշդութեամբ և վեհութեամբ, կար-ծես անոնք կը դրոշմէին անոր իրենց պատանեկան խանդավառ հոգիներուն ամենափափուկ շեշտերը, իրենց սիրելի երիցագոյն ընկերոջ հոգևոր Հար-սանեաց օրը, անպատում միութեան օրը ընդ երկնաւոր Փեսայի հոգւոց, որուն կը հեծէին հառաչէին անդադար իրենց հոգեակներն ալ. « Տէ՛ր սի-րեցի զվայելչութիւն տան քո, և զտեղի յարկի փառաց քոց.. Մտցուք ի յարկս նորա, երկիր պագցուք ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա »։.. Երբ ընծայեալը դարձաւ առ ժողովուրդն՝ բազկատարած և ծնրադիր, և սկսան առընթերակայք երգել սրտաշարժ շարականներն, արժանի հռչա-կելով զինքն այսքան անեղ բարձրացման և պաղատելով զՀոգին սուրբ, շատ աչքերէ արտասուք սահեցան գաղտագողի։

Եկեղեցական կեանքի ամենավսեմ վայրկեանն է այն, բեկեալ խոնար-հեալ սրտի ամբողջական զոհաբերութիւն, սրտի կատարեալ քեցումը տե-սանելի աշխարհէ, սիրելի ազգականներէ, իր մարմնէն՝ անձէն ու կեան-քէն, և կատարեալ նուիրումն Անոր, և լրութիւն Անով, և այլակերպու-թիւն յԱյնմ՝ որ ըսաւ. « Ես կենդանի եմ վասն Հօր. և որ ուտէն զիս՝ և նա կեցցէ վասն իմ ». և Առաքեալն ըսաւ. « Օրինացն մեռայ, զի Աս-տուծոյ կեցից, և ընդ Քրիստոսի ի խաչ ելից, և կենդանի եմ այսուհետև, ոչ ես՝ այլ կենդանի է յիս Քրիստոս ». իսկ միւս կողմանէ հոգենորոգ

շնորհաց նորակերտ ստեղծագործ գիրկընդխառնումը՝ անպատմելի տեսիլքներով և շնորհազեղ խորհրդաւոր խօսքերովն « Անեղծ և անստեղծ անժամանակ Հոգւոյն գթածի, որ բարեխօսէ վասն մեր յանմռունչ հեծութիւնս ». Հոգւոյն Սրբոյ՝ որ աստուածապէս կը ճառագայթէ սլրողաբար, ինչպէս ի Յորդանան և ի Վերնատան, « Որ մարգարէս տայ ի հովուաց, և Առաքեալս ի ձկնորսաց ». որ կ'արբուցանէ յանմահ վտակաց անքննելի Խորհրդոյն, որ զմահացու էակը՝ « մարդասիրութեան կարօտեալ մեծի », վայրկեանի մը մէջ կ'աստուածացնէ, ճոխացնելով ահեղ իշխանութիւններով, երկնաւոր Զուարթնոց իսկ նախանձելի։ Գլուխն ընկճած սիրալիր խորհուրդներու քաղցր բեռին տակ, նոր ընծայեալը հոգւոյ զմայլմամբ կը նկատէր ԽԱՉԸ և խաչեցեալը, ում կը մրմնջէ քրովբէական Նարեկացւոյն հետ. « Որ վասն իմ ի փորձ եկիր անիծից.. Կենա՛ց Օրհնութիւն.. զի եթէ յանձն առեր մեռանել վասն իմ.. ո՞րչափ հաճեսցիս առաւել և այժմ վասնգաւորս կրից կարեկցել... Եւ վասն արեանդ պատուականի միշտ մատուցելոյ... եկեսցեն գթութիւնք կամողիդ և պարգևողիդ կենաց ամենից. կանխեսցէ ցողդ ողորմութեան.. յառաջեսցէ արբուսցէ զանդաստանս պատքեալ ոնկեալ ոսկերացս թշուառութեամբ ի վիհն մահու. ծաղկեսցէ պտղաբերեսցէ բաժակդ երկնաւոր կենարարիդ՝ զերկիրս խնամեալ աւուր լուսոյ. զի քև նորոգեցայց զատեալ ի մեղաց, անմահ կենդանութեամբ »։ Եւ Խաչին քով կեցած Դիւցազունք.. և Գողգոթայի Արեան հետ խառնուա՞ծ արիւններ... Նոյն օրը կը տօնուէր Գրիգոր Աչերը Քահանայապետ ըստ կարգին Մելքիսեդեկի, դիւաց հալածիչ, մարդկան ուսուցիչ, սահմանափակ իմացականութեան անհաս՝ և կաւեղէն սրտերու զարհուրեցուցիչ կերպով տոկաց նա չարչարանքներու... Եւ նուիրեալին կոչման օրը, նախընթաց Կիրակամտին, տօնուեցաւ Ս. Գէորգ, մեծ Զօրավար և քաջարի Մարտիրոս, ցոլացող օրինակ այն ազատազէն քաջամարտիկ Քրիստոնէին՝ զոր, Անօթն ընտրեալ կը նկարագրէ, որ ո՛չ թէ մարմնոյ և արեան հետ, այլ խաւարային իշխանութեանց և պետութեանց հետ պիտի կռուի ու պայքարի։ Երկուքն ալ, Գրիգոր և Գէորգ, երկու անանջատ՝ ազուցիկ զօդուած պաշտելի Անուններ, աղաւնենման Հայրապետ հեզաբարբառ, և անվեհեր Զօրավար և Նահատակ հանգնագոչ. երկուքն ալ Խաչի, ի յաւիտեանս զենուած Գառինն անարատի աստուածային Զոհին փարած, իրենց արիւնը խառնեցին այն կողահոս Աղբեր՝ որ Ցիսուսի անհուն Սիրով խոցուած Սրտէն բղխեցաւ, « Զանմահութիւն ցողեալ տիեզերաց », և ոռոգեց Ս. Եկեղեցին. այս անարատ գառնը միշտ դողալով

պիտի քահանայագործէ նա, և պիտի բաշխէ անծախապէս՝ Թշուառ մարդկութիւնը անմահացնելու. զոր, քան զհրեշտակս աւելի պատուեալ, պիտի կրէ ձեռքերուն վրայ, մատուցանելու համար Հօր Բարձրելոյ, մեր փրկութեան Գինը, մեր երկնաւոր Գանձը, ողողելով սիրտն ու հոգին անպատում իղձերով, ու գոչելով Շնորհալւոյն հետ. «Սէր անուն՝ ՅԻՍՈՒՍ, Սիրով քով ձմլեա, Սիրտ իմ քարեղէն»: Եւ անոր քով պիտի կենայ միշտ Մայրն ցաւոց, Թագուհին Մարտիրոսաց, որ լացաւ լալիկ, երբ սուրն անցաւ անոր Սրտէն, Խորհրդական Վարդին փուշը. պիտի կենայ անոր մօտ՝ Կոյս-Մայր, Ապաստան մեղաւորաց, Մխիթարիչ վշտացելոց, Օգնական Քրիստոնէից և աստուածընկալ Քահանայութեան մեծ:

Մեր լինելի ժամանակներուն մէջ նորընծայ քահանայ մը երկնաւոր նշանակ (symbole) մի է հրաշալի: Եթէ լաւ խմանայ իր կոչումը, յորդահոսան ապականութեան ծոցէն բարձրացող՝ շնորհաց փայլմամբ ճաճանչող շուշան մըն է. անձնասիրութեան այս ահարկու հեղեղին մէջ ինքնազոհ ողջակէզ մըն է, կենցաղոյս բեկանուտ հաճոյքներէն տարագիր, զմարմինն կարեօքն հանդերձ գամելով Քրիստոսի հետ ի խաչին, և հոգին գերելով ի հնազանդութիւն հաւատոց անդրդուելի, երկրաւորութիւնը խամրեցնելով մահացնելով անդառնալի, զոհելով սրտին տրոփումը, արեան կայթիւնը, յոյսերը, ապագայն. ի մի բան՝ ողջ բովանդակ իւր կեանքը «աղաղակելով. «Կեանք ինծի համար Քրիստոս է, ու մեռնիլը՝ շահ»: Այս տեսակ Նորընծայն, այսպիսի Նորընծաները՝ խանդավառ կ'ողջունէ Կաթողիկէ Արձագանգ, և այս քաղցր աւետիսը անոնց հայրենեաց՝ և ի սփռեալն Հայոց աշխարհ կ'արձագանգէ, ուր անհրաժեշտ պէտք կայ՝ հիմայ տեսնել քան երբեք, կարօտի՝, համոզուած, բոլորանուէր, եռանդուն, վաղեմի առաքինութիւններով զարդարուած պատուաճանաչ կղերի մը, Թշնամւոյն ձեռքէն խլելու համար հոգիները, Քրիստոսի Տեառն որբացան Աւարը. «Բռունք յափշտակիչն գնա»: Կ'ողջունէ Արձագանգը՝ սիրով գեղուն, նաև այն պատանեակներն ու երիտասարդները, որոնք զբարի մասն ընտրելով և կոչուելով ի Քրիստոսէ՝ հետևելու Իրեն, առաքինանալու Խաչին խորհրդով, ամէն բան Թողուցին, և յասպարիզի ուսմանց և առաքինութեանց կը մարզուին, կը պատրաստուին մեծ կոչման, զոր ահիւ և դողութեամբ կ'ակնկալեն, ձգնելով օր ըստ օրէ նուազ անարժան հանդիսանալու անոր: Ո՛հ, ազնուականե՛ր, Սիրելիներ, ո՛հ քաջագոտի ընթացէ՛ք ըլլալու մէկ մի առաքեալ և մշակ ըստ սրտին Աստուծոյ, առանց ամօթոյ յայգւոջ Տեառն, Վարդերու Թագուհւոյն ընդ հովանեաւ:

Անշուշտ այսպիսի և նման խորհրդածութիւններով պճղուն և թաթաղուն վերադարձան ամէնքը այս ազնուաշուք Արարողութենէ, ուր Նոր այլ Քրիստոսներ տեսեր էին հիացմամբ մատչիլ ի Ս. Սեղանն, որոյ արդ իսկ օծուած արժանընտիր Ափը համբուրեր էին փղձկանօք և օրհնութիւնն առած, մրմնջելով իրեն համար յարատեւութիւն՝ անաղարտ պահելով շուշանն և խաչը, հայցելով կղերին համար՝ զարթօնք և արիութիւն, Եկեղեցւոյ համար՝ աննուազ հաստատութիւն, հաւատացելոց համար՝ անարատ բարեպաշտութիւն և հնազանդութիւն։

Եւ ջերմեռանդական ծէսեր կրկնուեցան այն օր ի մատրան, մինչ խուռն բազմութեամբ գիւղօրէից հաւատացեալներու. պարզ և միամիտ մարդիկ, քաղաքացիի ձևեր ու ծեքծեքում չունեցող, բայց անկեղծ և ուղղամիտ, և աւելի մօտ իրենց Աստուծոյն, բնութեան և բաց մթնոլորտին անսեթևեթ զաւակունք, հեռու և զերծ մեծ քաղաքներու աղմկալից ու մառախլապատ շրջանակներէն։

Անխառն ու խորհրդաւոր Ուրախութիւնք թևատարած կը թռչտէր այն օր Ս. Գրիգորի Դղեակին վրայ։ Միջօրէի սեղանն ալ պալուրուած էր անով։ Բազմեցան հրաւիրեալք որ պատուած էին Դպրոցը. Նոր Օծեալը բազմեցաւ Սրբազան Կաթողիկոսին քովիկը. «Ի վեր մատի՛ր» ըսած էին իրեն՝ Տիրոջը Սեղանին վրայ։ Եղջերուի մը պէս ծարաւած, տատրակի մը պէս հեծած էր։ Սիրոյ Աշակերտը վերջին Ընթրեաց մէջ իր երկնաւոր Վարդապետին քով հանգչած էր, ու սրտակիզիչ անձկութեան վայրկեանի մը մէջ անհուն սիրոյ յանդգնութեամբը հակեցաւ Անոր կրծքը և փարեցաւ և հոն հանգչեցուց իր պարտասեալ գլուխը!... Սեղանակիցք լի խընդութեամբ. քաղցրանուագ երգերու գեղգեղանքներն իրարու յաջորդեցին՝ ի պատիւ Ս. Գրիգորի, ի պատիւ Գերերջ. Հայրապետին, Հանդիսադիր Արքեպ. ին, Ընծայելոյն. և խառնուեցան նաև փափկահիւս քերթութեանց մաղթանքի մնչիւններ. և ծափեր թնդացուցին կամարները և կեցցէ ներ որոտացին, և նուագախումբը հնչեց քաղցրիկ ու ներդաշնակ. երկնառաք խնծիղը լեցուց ամէն ինչ, անարատ և պճղուն, հեզիկ ու մեղրիկ, իբրև արձագանգ մը Երկնքի անմահ Աշխարհային և իբրև ընդդիմաձայն բողոք դիմամարտ յաւակնութիւններու։

Երեկոյին պահուած էր Նոր անակնկալ մը. Հրախաղացութիւն։ Բացարձակապէս հիանալի եղաւ։ Ցայսմ մասին նշանաւոր եղող տեղական արուեստին նրբութիւնները գործադրել տալու համար և ոչ բանի մը խնայուած էր։ Այն բարձունքէն՝ մութի մէջ հեռաւոր հորիզոններու համար

տեսարան մը պարզուեցաւ՝ հրացայտ դարձդարձիկներու, լուսերփնիկ ողողումներու, ուղիղ ընթացող հրահոսան ջրվէժներու, կրակուրց թեւերով սաւառնող թղթարեր աղաւնիներու, օդոյ մէջ գալարուելով սողացող շչող սուլող հրայրեաց յաւահատ օձերու, ճառագայթող աստղներու, անձրեւող գեղերփնիկ կայծերու, բազմատարած ոսկեթաթախտ լուսացնցուղ ամբաւենեներու որ երկնից կամարը կը ծածկեն, շեշտակի յերկինս սլացող բնրկաճայթ հրթիռներու՝ հրաբորբոք գունդերու... ամէնը գիրար կտրելով, իրարու բաղխելով խառնուելով, գազանային ժխորներով, ուռնայնու թեան դժոխային գոռումներով, աղմկալից կրքերու փոթորիկներով, տիեզերատատ ահեղ բոմբիւններով, զարհուրելի և խօլական արշաւանքներով... և ահա կը նուաղին, կը մարին, կը մխան, կ'իյնան... այսպէս անցան արհաւրալից բռնակալներ, այսպէս չիջան լռեցին կորան մեծադոզոզ ազգեր՝ դարերու ընթացքին մէջ:.. Եւ կը նուագէր երաժշտից խումբն անդադար. և նուագարանաց հոգեմայլ ելևէջներով կը նկարէին հրաբորբոք սրտից իղձերուն, անշէջ կայծերով, մեղեդիներու թեւերուն վրայ յերկինս ի վեր սլացումները, մեռնելով մարելով աշխարհի, և անդին աստղներու պէս փայլելով ի մշտնջենաւոր յաւիտեանս։

Ողջո՛յն սիրելի Սանուանց. նորաբողբոջ միշտ հանին ընտիր ընտիր քահանաներ, պաշտպան Ս. Կրօնից, վրէժխնդիր անոնց որ կը ճգնին խլել քեցել զԳրիգոր՝ Սեղբեստրոսի գերկընդխառնումէն. կորովի, առաքինի, անձնանուէր պաշտօնեաներ. « Ծէ՛ր, կեցո՛ զորդի ծառայի քո զոր ի Հռովմայ Գահիցն վերապատուեցեր »։...



ՆՈՐԸՆԾԱՅ ՔԱՀԱՆԱՅԻ ՄԸ

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

Կարին 24 Յուլիս 1911.

Բիւր շնորհակալութիւն մատուցանելու ենք Ամեն. Գերերջ. Հոգևոր Տիրոջ որ շնորհեց մեզ պարբերական թերթ մը (1)։ Ցաւերժայիշատակ Կոնդակովը, ճշմարտութեան կնիքը կրող խօսքերով զամենս հրահանգելէն ետքը, պատեհ ժամանակին և պարագային գաղափարներ յայտնելու, հաղորդելու թանկագին միջոցը հայթայթեց։

Այս անգամիս կը բաղձամ ներկայացնել, թեմերու մէջ կամ դեռ կղերանոցներու սեմերուն վրայ գտնուող նորընծայ պաշտօնակիցներու, Կարնոյ մէջ ունեցած մեռասանամսեայ կեանքս. խորհրդածութիւններով, դիտողութիւններով հանդերձ՝ այլ և այլ եղելութեանց նկատմամբ որք տեղի կ'ունենան Քահանայից յատուկ եղող տպարիզին մէջ։

Սրտակից ընկերներով Կղերանոցի մէջ մնած, հոգիլից սկզբունքներով տոգորուած, հոգւոյս մէջ առաքելութեան և դաստիարակութեան խորհուրդներ փայփայելով տեղս կը դիմէի արագընթաց։ Ծանօթ էին ինձ մասամբ թեմին խռովութիւնները։ Այսու հանդերձ բնաւ վհատութիւն չէի զգար։ Որովհետև անկասկածօրէն կ'ենթադրէի թէ, այդ ամէն ապօրինի հակակրան արարքներու մէջ, Կարնոյ կղերը ճշմարտութեան, արդարութեան դրօշը բարձր կը բռնէր։ Անտարակոյս, կ'ըսէի, Քահանայք կը դիմադրեն երբ աշխարհականք իրենց նուիրական սկզբանց և պարտուց դպչին։

Առաջին օրէն գէշ տպաւորութիւն մը կրեցի՝ նորահաս թեմական քահանայից հոս չգտնուելուն տեղեկանալով։ Այս պատճառաւ որ՝ տեղս քահանայատուն պակաս ըլլալով չափազանց կը փափագէի որ միատեղ բնակէինք։ Նոյն պահուն կրօնական և բարեկրթական ազդեցիկ ոյժ մը յառաջ բերած պիտի ըլլայինք։ Այսպէս հաստատեցին որ անոնք կոպիտ նախատինքներ, անիրաւ հալածանքներ կրելուն համար ասկէ հեռացեր էին։ Ցաւալի էր, բայց ոչ անդարմանելի։

(1) Միանգամայն երախտապարտ ըլլանք Ս. Քահանայապետի Պիոսի ԺԱ. եռանդուն մեծագործութեան որ հրամայեց այն հրատարակութիւնը և օրհնեց զայն որպէս ղի արդիւնաշատ հանդիսանայ Հասարակութեանս։

խմբ.

Ժամանմանս երկրորդ օրն՝ բնականաբար Եկեղեցի գնացի։ Կը մերձենայի Աստուծոյ տանը՝ կուրծքս խանդ ու աւիւնով լեցուն, մտքս պէսպէս քահանայական նպատակներով օրօրուն։ Արդարեւ այն է քահանային սեպհական մղումները, գործունէութեանը գլխաւոր միջավայրը։ Նա միջնորդ պիտի ըլլայ Աստուծոյ և ժողովրդեան միջև, ուսուցանէ, դաստիարակէ, աղօթէ։

Սուրբ զոհը մատուցանելէս վերջ ուզեցի մօտէն քննել եկեղեցին զոր մանկութենէս սիրած էի։ Բա՜բէ, յանկարծ եպիսկոպոսական աթոռը չորերով աքօղուած նշմարեցի, իբր թէ թափուր ըլլար։ Աւա՜ղ, կաթողիկէ համարուած եկեղեցւոյն մէջ այնպիսի տեսարան...։ Թախիծ ու կսկիծ նորընծայ քահանային հոգւոյն խորը կը թափանցեն։ Եւ նախազգացութիւն ունեցայ որ աշխարհականք յանդգներ և միջոց գտեր են մինչեւ դասին մէջ իշխելու, ինքնագլուխ գործելու։ Արդ եթէ այդպէս է. հապա քահանայք ի՞նչ կ'ընեն... կամ ի՞նչ կրնան ընել այլ ևս, քանի որ աշխարհականք մինչեւ այդ տեղ հասնելու համար իրենց կուրծքին վրայէն անցած պիտի ըլլան։ Հետեւաբար Եպիսկոպոսական վարչութիւնն ալ գործնականապէս ոչնչացած նկատելու էր Կարնոյ մէջ։ Մտածելով այս տխուր իրողութեանց, մեկնեցայ։ Սակայն իրականութեան դեռ մէկ ծայրը տեսած էի։ Կարնոյ կրօնական շփոթութիւնը, սխալը նոր պիտի պարզուէր առջեւս։

Իրօք հետեւեալ օրը, կիրակի էր, եկեղեցիէն ելնելուս, գաւիթին մէջ կարգ մը երիտասարդներ շրջապատեցին զիս։ Վճռական ձեւերով մին ըսաւ. «Վարդապե՛տ, Պատարագիդ մէջ սխալ մը ըրիր»։ Ի՞նչ սխալ, հարցուցի զարմանքով։ «Հայր՛, յարեց, Եպիսկոպոսը կը յիշէք»։ – «Այդ, պատասխանեցի, եկեղեցական օրէնքի համաձայն է. ուրեմն պարտքս է որ որ այդպէս ընեմ»։ — Հոն մի քանի ձայներ հնչեցին. «Օրէնք չկայ։ Ազգը այսպէս կ'ուզէ, որոշեր է։ Եթէ ազգին քահանան էք, եթէ եկեղեցի կ'ուզէք գալ, պիտի չյիշէք»։ Իրենցմէ բաժնուելուս սայրասուր սլաք մը կարծես մինչեւ սրտիս դպած էր։ Զայրոյթ, արտմութիւն կ'եռացնէին արիւնս. բայց ի՞նչ օգուտ։ Քանի որ նուիրապետութիւնը ոտնակոխ ընելէն զատ, աշխարհականները կղերականներն ալ իրենց քմացը համաձայն վարել կը յանդգնէին...։ Դասը, բեմը, խորանը իրենց յանձնուած կը նկատէին։

Անշուշտ ստիպեալ էի մերժել այն երիտասարդաց պահանջը. ուստի և շարունակեցի բաց և արձակ յիշել տեղւոյն Առաջնորդը։ Լաւագոյն է հնազանդիլ Աստուծոյ և Եկեղեցւոյ քան թէ մարդկանց։ Այդ օրէն սկսան

ատել գլու, խոժոռ խոժոռ նայիլ։ Գիտնալու է որ անոնք և ոչ մէկ քահանայի կիրթութիւն կու տան։ Բայց հաճելի է ուրիշի ատելի ըլլալ իր պարտքը կատարելով։ Միանգամայն մտքերը կը լուսաւորուին, խղճերը կ'արթննան։ Հարկ էր հասկցնել ոչ երկդիմի խօսքերով այլ գործքով թէ՝ լրինք աշխարհականք Քրիստոսի հիմնած Եկեղեցւոյն մէջ օրէնսդիր և վարիչ չեն։ Ինչ որ ալ հանդիպէր՝ անկարելի էր զիջանիլ։ Դիտեցէք, խնդիրը անձի վրայ չէ այլ սկզբունքի, պէտք էր հնչեցնել «Չէ օրէն» ի ձայնը։ Կարծես կարգ մը երիտասարդներ, որք «խումբ» կը կազմեն և մի քանի ուրիշ անձինք Կարնոյ Հասարակութեան և Եկեղեցւոյն բարձրագոյն իշխանութիւնը, վարիչները, դարձեր են։

Իրօք այդ անձինք Կարնոյ ուղղափառ կրօնքին և Դատաւորակութեան Բարձրագոյն ատեանը դարձեր են և, զգոյշ, պատերազմական ատեան։ Իրենց խորհրդատունը Առաջնորդարանի դահլիճն է։ Կը կարծեն թէ քահանայք անդին իրենց խեղճ գործակատարներն են։ Հոն, անոնք կ'որոշեն, կը վճռեն անդարձաբար։ Արդեօք քաղաքական հայ և տաճիկ կուսակցութեանց խնդիրներով կամ թէ կուսակալութեան վարչական ժողովին հարցերո՞վ կը զբաղին։ Լաւ ևս տէրութեան հողային, զինուորական օրէնքնե՞րը կը քննեն, կ'ուսումնասիրեն։ Ոչ բնաւ, երբէք։ Այդպիսի խնդիրներով զբաղելու համար գիտութիւն, նուրբ քաղաքական կարողութիւն և կորով անհրաժեշտ են։ Անոնք եկեղեցւոյ և դպրոցին եկամուտները կը մատակարարեն, որովհետև բաւական փորձառութիւն չունին եկեղեցականներու վրայ և այս վերջիններուն ընթացքը կը քննադատեն։ Երբեմն ալ ատոնց վրայ բանադրելու միջոցներ կը հնարեն։ Ջեր օրինակ՝ այս անձինք օր մը ընդփոյթ ազգային դպրոցը բանալու սիրուն և գովելի գաղափարը յղացեր էին։ Տեսչի և դասախօսի պաշտօնները յանձն առնելու համար՝ ուրիշ երկու քահանայ և ես կանչուեցանք։ Դպրոցի նկատմամբ՝ ըստ բաւականի գաղափար ունենալու համար չկրցայ իւրաքանչիւր կէտի վրայ համաձայնիլ։ Նոյնպէս ալ արդէն միւս ընկերները։ Հետևաբար խօսակցելու սկսան յանիրաւի խռովանալ, սպառնալ, ապաղակել։ Գէթ մեր ազատութիւնը յարգէին։ Ուստի որպէսզի բացուելիք դպրոցը կարենայ մրցիլ տեղւոյս դպրոցներու հետ, յաջողութիւն գտնէ, շարունակուի և քիչ ժամանակուան համար եկեղեցւոյ և ննջեցեալ բարերարաց դրամը իզուր չմսխուի՝ իմ առաջարկներս շարունակեցի ընել վերջապէս համաձայնութիւնն՝ թէպէտ բաղձացեալ՝ չեղաւ։

Երբ տեսան որ երիտասարդ քահանայք իրենց հրամանաց առջև չեն

ծախր, բարկութիւննին իր գագաթնակէտը հասեր էր։ Երեկոյեան ժամերու ժողով կը գումարեն, այս անգամ ճիշտ զինուորական ատեան, և կ'որոշեն որ կամ հնազանդինք կամ երեք ալ արտաքսուինք Եկեղեցիէն։ Կիրակին պատարագելու կը ներկայանանք։ Մի քանի անձինք եկեղեցւոյ դուռը սրգանոք կը սպասեն։ Ներսը սպասաւոր մը պատարագելու արգելք կ'ըլլայ՝ Ազգին կողմանէ այդ հրամանը եղած է, կ'ըսէ։ Ազգը... Ազգը... կը պոռայ։ Մինչդեռ այս գործքը ընողները՝ մէկ լումայի անգամ իրաւունք չունին եկեղեցւոյ նիւթականին վրայ։ Ներկայ գտնուող հանդարտ ժողովուրդը, ոչխարի պէս հանդարտ, բան չըսեր՝ եղածէն դժգոհ ըլլալով հանդերձ։ Մենք դուրս կ'ելնենք, իրենք ալ առանց պատարագի մեզ կը հետեւին։

Այլայլեցնէ գուցէ զձեզ այդ յանդգնութիւնը։

(Շարունակելի)

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՍԻՆՀՈԴՈՍ

ՀՌՈՎՄ

Սինոդոսի գումարման համար գրուած Կաթողիկոսական Կոնդակին մէջ որոշուածին համաձայն, Հայ-Կաթողիկէ Ազգային Սինոդոսը հանդիսաւոր կերպով պիտի բացուի վաղը՝ Կիրակի, 15 Հոկտ. ն. տ., յեկեղեցւոյ Ս. Նիկողայոսի Տոլենտինեցւոյ Ք. Հայ Դպրոցի ի Հռոմ։ Իսկ այսօր յետ միջօրէի տեղի պիտի ունենայ Համագումար Պատրաստական Ժողովը։ Ցառաջիկայ թուով պիտի տայ Կաթողիկէ Արձագանգը աս ամենուն՝ ինչպէս նաև Կարդինալ Կօթթիի և Սրբազան Քահանայապետին Ունկընդրութիւններուն մանրամասնութիւնները։

Փ. Գիանի
Տնօրէն Պատասխանատու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցանախմբութիւն մը . . . . Էջ 191
Նորընծայ Քահանայի մը Տեղեկագրական նամակը . . . . » 199
Կաթողիկոսական Սինոդոս ի Հռոմ . . . . » 202